Հիմա մենք կանգնած ենք սերնդային աղետի առաջ, որը կարող է ի չիք դարձնել մարդկային դեռեւս անհայտ ներուժը՝ վտանգելով տասնամյակների առաջընթացն ու խորացնելով արմատավորված անհավասարությունը: Հենց որ կորոնավիրուսի տարածումը վերահսկելի դառնա, աշակերտներին եւ ուսանողներին հնարավորինս արագ դպրոցներ ու կրթական այլ հաստատություններ ապահով վերադարձնելը պետք է թիվ մեկ առաջնահերթությունը լինի:
(Անտոնիո Գուտերեշ, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար)

Չորեքշաբթի
5 օգոստոսի 2020թ.
№ 17 (533)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի կարծիքը՝ հանրակրթության պետական առարկայական չափորոշիչների եւ ծրագրերի մասին

Այս օրերին տեղի են ունենում քննարկումներ «Հայոց լեզու 7-12-րդ դասարաններ» եւ «Գրականություն 7-12-րդ դասարաններ» հանրակրթության պետական առարկայական չափորոշիչների եւ ծրագրերի շուրջ: Արտահայտվեցին բազմաթիվ հայագետներ, այդ թվում՝ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դասախոսներ: Հարցը քննարկվել է նաեւ ֆակուլտետի գիտխորհրդի նիստում:

Հաշվի առնելով նախագծում իբրեւ թե կատարված բովանդակային փոփոխությունները՝ Հայ բանասիրության ֆակուլտետը իր խոր մտահոգությունն է հայտնում այս ծրագրերի եւ չափորոշիչների վերաբերյալ, ինչպես նաեւ իր անվստահությունը՝ աշխատանքային խմբին եւ անվերապահ մերժում ծրագրերը հիմնավոր պատճառներով:

«Ֆեյսբուքյան տիրույթներում հեղինակային խումբը, ինչպես նաեւ ԿԳՄՍ նախարարությունը պաշտոնապես տեղեկացրին, որ կատարվում են փոփոխություններ հրապարակ նետված սեւագրության մեջ (խմբի անդամների բնորոշումն է), եւ շուտով հանրության դատին կներկայացվեն նոր՝ փոփոխված եւ լրամշակված չափորոշիչ ու ծրագիր: Սակայն, ինչպես եւ սպասելի էր 9-ամյա ժամկետում միայն սեւագրություն կազմելու հմտություն ունեցող խմբից, հրամցվեց երկրորդ՝ լրամշակված սեւագրությունը՝ միայն մասնակիորեն փոփոխված «Գրականության» ծրագրով: Արդեն իսկ բացահայտ է, որ հեղինակային խումբը հարկադիր համառությամբ կամ ցանկություն չունի, կամ ի զորու չէ ընդառաջ գնալու հանրության զգալի մեծամասնության պահանջին: Ավելին՝ առանց բազմակողմ մասնագիտական քննարկումների, օտար չափորոշիչների ապաշնորհ թարգմանությամբ ստացված ծրագրի տեղայնացումից ծնված անտեղի ոգեւորությամբ ակնհայտորեն փորձ է արվում հայագիտության մեջ անուրանալի վաստակ ունեցող գիտնական մտավորականներին «դասդասելու» հնի եւ նորի կեղծ սահմանաբաժաններում:

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետը, ձեռնպահ մնալով հարցի այդօրինակ քննարկումներից, ներկայացնում է ծրագրերը մերժելու մի շարք հիմնավոր պատճառներ:

Ա) Գրականության նախագիծը ամբողջությամբ մերժելի է հետեւյալ պատճառներով.

1. Ավելի քան մեկ դար՝ սկսած Հայաստանի առաջին հանրապետության շրջանից (1918-1920) մինչեւ օրս, Հայաստանի հանրակրթական դպրոցում եղել է «Հայ գրականություն»: Միջին դասարաններում աշակերտներին դասավանդվել է «Գրականություն» առարկա, որն իբրեւ բնագրեր ներառել է նաեւ համաշխարհային գրականության նմուշներ: Իսկ բարձր դասարաններում (նախկինում՝ 9-10-րդ, վերջին շրջանում՝ 10-12-րդ) դասավանդվող առարկան կոչվել է «Հայ գրականություն», որն ընդգրկել է միայն հայ դասական գրականության կարեւոր հեղինակներին եւ նրանց ընտիր գործերը:

Ներկա նախագծով նախատեսված է առարկայի անվանումից հանել «հայ» բառը եւ համապատասխանաբար անցնել նաեւ համաշխարհային գրականության երկեր: Դրանով կրճատվում են հայ գրականությանը հատկացվող ծավալն ու ժամաքանակը, նվազում է ուսուցման խորության աստիճանը, եւ

Շարունակությունը՝ էջ 7

Դուք արդեն գիտեք իմ հին կարծիքը, թե ես հանգամանքներում՝ Ռուսաստանն է մեր փրկությունը:
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄՅԱՆՅԱՆ

Կապանում ոստիկանների բո՞ւնտ էր

Ըստ Սյունիքի մարզկենտրոնում ակտիվորեն շրջանառվող տեղեկությունների՝ հուլիսի 31-ի երեկոյան ոստիկանության Կապանի բաժնում մի խումբ ոստիկաններ հայտարարություն են արել՝ ծառայությունից հրաժարվելու եւ աշխատանքից ազատվելու մտադրության մասին:

Ոստիկաններն անհամաձայնություն են հայտնել վերջին շրջանում բաժնում կատարված կադրային որոշ նշանակումների, ինչպես եւ աշխատանքային ու ծառայողական առանձին հարցերի հետ:

Ի դեպ, օրեր առաջ Կապանի բաժնում նշանակվել է նոր պետ, նոր ղեկավար է նշանակվել նաեւ պահակային ծառայությունում:

Որպես քարե կանոն, Սյունիքում ավանդաբար ղեկավարներ են նշանակվում բացառապես ոչ սյունեցիները (սյունեցիներին պատասխանատու պաշտոնների նշանակել չի կարելի), իսկ եղած սյունեցի պաշտոնյաներն էլ հնարավորինս դուրս են մղվում:

Կապանի ոստիկանության վերջին նշանակումներն էլ, ըստ երեւույթին, այդ տրամաբանությամբ են կատարվել:

Հուլիսի 31-ին Սյունիք էր այցելել հանրապետության փոխոստիկանապետի առաջին տեղակալ, գնդապետ Արամ Հովհաննիսյանը: Հենց նրա այցն էլ առիթ էր դարձել, որ Կապանի ոստիկանության քրեական ծառայության աշխատակիցներն արտահայտեն իրենց մտահոգությունները:

Օրեր առաջ էլ դժգոհություն էին հայտնել Կապանի պահակային ծառայության աշխատակիցները:

//

Սուրիկ Խաչատրյանի դեմ մահափորձի գործով ամբաստանյալները դատապարտվեցին

Սյունիքի նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանի դեմ մահափորձի գործով ամբաստանյալ Հենրիկ Ավագյանը մեղավոր ճանաչվեց 34-104-րդ հոդվածով նախատեսված հանցագործության՝ երկու կամ ավելի անձանց նկատմամբ սպանության փորձի մեջ, իսկ Գարեն Աթաջանյանը 235-րդ եւ 38-34-104-րդ հոդվածներով նախատեսված հանցագործության՝ ապօրինի զենք-զինամթերքի եւ սպանության փորձին օժանդակելու մեջ:

Վերադառնալով խորհրդակցական սենյակից՝ այս դատավճիռը հրապարակեց Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նապոլեոն Օհանյանը:

Հենրիկ Ավագյանը եւ Գարեն Աթաջանյանը դատապարտվեցին 12 տարի ազատազրկման. Աթաջանյանը հիվանդության հիմքով ազատվեց պատիժը կրելուց, եւ նրա ընտրված խափանման միջոց գրավը վերացվեց, իսկ Ավագյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը մնաց անփոփոխ՝ նախքան դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Նա պահվում է «Գորիս» քրեակատարողական հիմնարկում: Նշենք, որ գործով մեղադրող դատախազը ճառերի փուլում դատարանին միջնորդել էր ամբաստանյալներին դատապարտել հենց 12 տարի ազատազրկման:

ARMTIMES.COM

Այլեւս մեզ հետ չէ Սիսական տան արժանավոր զավակ Աղասի Հակոբջանյանը

2020 թ. հուլիսի 27-ի ուշ երեկոյան երկրային կյանքին հրաժեշտ տվեց Աղասի Մամիկոնի Հակոբջանյանը:

Տեղի ունեցածն անսպասելի էր, քանզի մշտական կապի մեջ էինք, եւ թվում էր, թե այսօր կամ վաղը, մոտ մեկամյա բուժումից հետո, դուրս է գրվելու Երեւանի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնից ու իր հպարտ, երկրաշեն ներկայությամբ կրկին լիցք է հաղորդելու սյունիքյան մեր ընթացքին…

Սակայն տեղի ունեցավ այն, ինչ որեւէ մեկի մտքով անգամ չէր անցնում…

Աղասի Հակոբջանյանը ծնվել է 1958 թ. հունվարի 1-ին Սիսիանի շրջանի Տոլորս գյուղում:

1964-72 թթ. սովորել է Տոլորսի ութամյա դպրոցում, այնուհետեւ՝ Սիսիանի N 1 միջնակարգ դպրոցում:

1974-75 թթ. աշխատել է Սիսիանի N 6 գյուղշինտրեստում՝ բանվոր:

1975-80 թթ.սովորել է Երեւանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում, ավարտել ինժեներ-էլեկտրիկի որակավորմամբ:

1980-82 թթ. աշխատել է «Հայգյուղտեխնիկայի» Սիսիանի արտադրական միավորման ինժեներ:

Այնուհետեւ՝ 1982-83 թթ. եղել է տեղամասի պետ Սիսիանի մելիորատիվ կայանում, 1983-84 թթ.՝ դարձյալ «Հայգյուղտեխնիկայում»՝ բրիգադավար:

1984-86 թթ. աշխատել է էներգահսկողության Սիսիանի տեղամասի պետ:

1986-92 թթ. եղել է Սիսիանի էլցանցի, 1992-96 թթ.՝ «Արմենտել» ՓԲԸ Սիսիանի տարածքային բաժնի պետը:

Ութ տարի՝ 2008-16 թվականներին, Սիսիան համայնքի ընտրյալ ղեկավարն էր:

Հրաշալի ընտանիք էր ստեղծել, ունի մեկ որդի, երեք դուստր:

Աղասի Հակոբջանյանի հասարակական-քաղաքական եւ պետական գործունեությունը մեծ մասշտաբով դրսեւորվեց հատկապես 2008-2016 թվականներին, երբ գլխավորում էր Սիսիան քաղաքային համայնքը:

Հենց նրա պաշտոնավարման ժամանակ Սիսիան քաղաքը հանրապետությունում ճանաչվեց սպորտի եւ երիտասարդության առաջին մայրաքաղաք:

Նրա բարի կամքով ու նախաձեռնությամբ էր, որ Սիսիանը յոթ տարի շարունակ՝ յուրաքանչյուր տարվա օգոստոսի 12-ին, դարձել է սպորտային, մշակութային տոնախմբությունների վայր, որտեղ օջախի կանչով հավաքվում էին աշխարհի տարբեր ծայրերում սովորող եւ բնակվող սիսիանցիները, ուրախանում, հաղորդվում հայրենյաց արմատներին:

Նրա նախաձեռնությամբ էր, որ Սիսիանում եւ մայրաքաղաք Երեւանում պետական ամենաբարձր մակարդակով նշվեց մեծ քնարերգու Համո Սահյանի 100-ամյակը:

Նրա նախաձեռնությամբ պատշաճորեն մեծարվեց համաշխարհային հռչակ ունեցող, Սիսիանի զավակ Նիկողայոս Ադոնցը, ում գիտական ժառանգությունը նորովի ամփոփվեց Սիսիանում կազմակերպված հայագիտական աննախադեպ կոնֆերանսում:

Նրա պաշտոնավարման օրերում Սիսիանում կազմակերպվեցին բազմաթիվ փառատոներ, լուծվեցին բնակչությանը մտահոգող, քաղաքի առջեւ ծառացած շատ խնդիրներ, որոնցից յուրաքանչյուրը խոսակցության առանձին նյութ կարող է լինել:

Նա կարողացավ Սիսիանն ու նրա մեծատաղանդ զավակներին նորովի ճանաչելի դարձնել ոչ միայն մեր հանրապետությունում, այլեւ Հայաստանի սահմաններից դուրս:

Վերջին 10-13 տարում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության անդամ էր եւ այդ կուսակցության սիսիանյան կառույցի ղեկավարը: Սակայն իր էությամբ ու գործունեությամբ վերկուսակցական անձնավորություն էր, եւ նրա կուսակցությունը, առանց չափազանցության, Սիսիանն էր, Սյունիքն էր, Հայաստան աշխարհը:

Ապրում էր երկրի հոգսով. 2016 թ. ապրիլյան պատերազմի օրերին նրան հանդիպեցինք Մատաղիսում՝ Սիսիան համայնքի օգնությունն էր բերել կրակագծում գտնվող «Սիսական» փառապանծ ջոկատի մարտիկներին, նաեւ փորձում էր բարոյական աջակցությամբ նեցուկ լինել նրանց:

Աղասի Հակոբջանյանը, հիրավի, վայելում էր սիսիանցիների (եւ ոչ միայն) անկեղծ սերն ու հարգանքը: Եվ դա պատահական չէր. ամեն մի սիսիանցու հոգս իրենն էր համարում, յուրաքանչյուր սիսիանցու ցավին բալասան էր փորձում գտնել:

Բացառիկ էր ընկերական հարաբերություններում. դրա դրսեւորումն էր այն մեծ շրջապատը, որ ուներ ոչ միայն Հայաստանում, այլեւ երկրի սահմաններից դուրս:

Մեր ցավակցությունն ենք հղում Աղասի Հակոբջանյանի ընտանիքին եւ հատկապես նրա՝ այլեւս ու ընդմիշտ սրտամորմոք Եվգենյա մայրիկին, նրա կյանքի հավատարիմ ընկերուհուն՝ տիկին Կարինեին, Բենիկ Հակոբջանյանին, զավակներին՝ ծանր եւ անդառնալի կորստի կապակցությամբ:

Ցավակցում ենք Սիսիանի տարածաշրջանի ամբողջ բնակչությանը:

Երջանկահիշատակ Աղասի Հակոբջանյանի ընտանիքի երախտիքի խոսքը

Յոթերորդ օրն է՝ մեզանից անդառնալիորեն հեռացել է Աղասի Հակոբջանյանը:

Անսպասելիորեն վրա հասած ողբերգությունը հոգեցունց վշտով է պարուրել մեր ընտանիքին, մերձավորներին ու բարեկամներին:

Ցավի ու կսկիծի այս ժամին, սակայն, մենք միայնակ չեղանք, ինչը մեզ հավելյալ ուժ ու կորով է հաղորդում՝ հնարավորինս տանելի դարձնելու մեր սուգը:

Աղասի Հակոբջանյանի մահվան կապակցությամբ հանրային մեծ արձագանքը, խորը ափսոսանք եւ ցավ արտահայտող հարյուրավոր հեռախոսազանգերը (նաեւ արտերկրից), լրագրային եւ համացանցային սրտաբուխ հրապարակումներն ու գրառումները, ինչպես եւ հուղարկավորությանը ներկա հոծ բազմությունը՝ հանրապետության ամենատարբեր վայրերից ժամանած մարդկանցով, ցույց տվեցին, որ Աղասի Հակոբջանյանի կորուստը մերը չէ սոսկ:

Այդ ամենը նաեւ Աղասի Հակոբջանյանի տարիների երկրաշեն, պետականամետ ու նվիրական գործունեության յուրօրինակ գնահատականն էր, որը մեր վիշտը փոքր-ինչ փարատող հանգամանք եղավ:

Այսպիսի դեպքերում, հայոց կարգի համաձայն, պատասխան խոսք պիտի հնչեցնեինք հոգեհացին՝ թաղման օրը կազմակերպվող ծիսային ճաշկերույթին: Սակայն բացառիկ հյուրասիրությամբ աչքի ընկնող, իր օջախում եւ օջախից դուրս սուփրա-սեղանը մշտապես բացող Աղասի Հակոբջանյանի հոգեհացը չկազմակերպվեց՝ պայմանավորված համավարակից բխող սահմանափակումներով:

Ուստի եւ այսկերպ ենք մեր շնորհակալությունը հայտնում բոլորին ու յուրաքանչյուրին, ովքեր Աղասի Հակոբջանյանի անժամանակ վախճանն իրենց անձնական վիշտն ու կորուստը համարեցին, ովքեր սգախռով այս օրերին մեզ հետ էին:

Երախտագիտության խոսք ենք ուղղում հատկապես Սիսիանի բնակչությանը՝ մեծից մինչեւ փոքր, որ երիցս հավաստեցին իրականը՝ Աղասի Հակոբջանյանը եղել է իր բնօրրանի սիրելի ու արժանավոր զավակը, եղել է իրենցից մեկն ու իրենց բարեկամը, հարեհաս ընկերը:

Մեզ համար ծանրածանր այս պահին Աղասի Հակոբջանյանի հոգու համար աղոթելով, բոլորիդ եւ յուրաքանչյուրիդ առողջություն ու հաջողություն ենք մաղթում:

Թող աշխարհին պատած համավարակը հնարավորինս շուտ նահանջի ու այլեւս մարդկային կյանքեր չխլի:

Մեր ցավը թող շրջանցի բոլորիդ:

Թող ձեր օջախներում առողջություն, երջանկություն եւ հանգստություն իշխի, իսկ մենք ձեզ այցի գանք ուրախ առիթներով:

5 ՕԳՈՍՏՈՍԻ 2020Թ.

Մեր ցավակցությունն ենք հղում նրա աշխարհասփյուռ բոլոր ընկերներին, ովքեր, համաճարակային ներկա իրավիճակում չեն կարողանալու նույնիսկ վերջին հրաժեշտը տալ իրենց անզուգական ընկերոջը:

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»

«Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունը փնտրում է թեկնածուներ Կապանի տարածքային բաժնի պետի թափուր հաստիքի համար

Հիմնական աշխատավայրը՝ ք. ԿԱՊԱՆ

Հիմնական պահանջները՝

- Կրթությունը՝ բարձրագույն (նախընտրելի՝ տեխնիկական, կդիտարկվեն նաեւ իրավաբանական, տնտեսագիտական):
- Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ տեխնիկական, իրավաբանական, տնտեսագիտական կամ կառավարման ոլորտում:
- Արդյունավետ աշխատանքի կազմակերպման, բանակցությունների վարման հմտություններ:
- Արտակարգ եւ վթարային իրավիճակների կառավարման հմտություններ,
- Առաջնահերթությունները սահմանելու եւ ժամանակը կառավարելու, արագ կողմնորոշվելու եւ որոշումներ կայացնելու ունակություններ:
- Համակարգչային գիտելիքների (MS office) գերազանց իմացություն:
- Գործնական հաղորդակցման եւ գործավարության կանոնների իմացություն:
- Հայերեն լեզվի գերազանց իմացություն, ռուսերեն եւ անգլերեն լեզուների իմացությունը կդիտարկվի որպես առավելություն:
- Պատասխանատվության բարձր զգացում:

Պարտականությունները՝

Ընկերության տարածքային բաժնի ենթակառուցվածքի ու հեռուստակայանների բնականոն աշխատանքի կազմակերպում, բաշխում, վերահսկում:
Մասնակցություն գործող սարքավորումների արդիականացման եւ նորագույն տեխնիկական լուծումների ներդրման աշխատանքներին:
Վթարային իրավիճակներում տարածքային բաժնի կայաններում գտնվող տեխնիկական միջոցների բնականոն աշխատանքի վերականգնման գործընթացի կազմակերպում:
Կայանների հոսանքազրկման դեպքերում, ըստ անհրաժեշտության, «ՀԷՑ» ՓԲԸ համապատասխան մասնաճյուղերի հետ բանակցությունների վարում:
Տարածքային բաժնի հեռուստահաղորդիչ ցանցի զարգացմանն ուղղված ծրագրերի մշակում:
Ենթակա հեռուստակայանների տարածքներ համապատասխան թույլտվության առկայությամբ մուտքի ռեժիմի ապահովում:
Տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցություն:

Մենք սպասում ենք Ձեր ինքնակենսագրականը (CV) trbna-hr@tna.am հասցեով:
Դիմելու վերջնաժամկետ՝ 2020 թվականի օգոստոսի 20:
Հարցազրույցին մասնակցելու համար ընտրված թեկնածուները լրացուցիչ կտեղեկացվեն:



Ուխտագնացություն Մեծ Իշխանասարի երկնահաս եւ աստղաթաթախ գագաթ

Սյունեցիների համար հազարամյակներ շարունակ նվիրական դարձած Մեծ Իշխանասարի գագաթ բարձրանալը մեզ համար երազանք էր դեռեւս մանկության տարիներից:

Սրբասարի գագաթ բարձրանալն առավել հրատապ դարձավ 2019-ին, երբ սկսեցինք «Ուխտագնացություն Սյունիք» ծրագրի իրագործումը:

Ծրագրի առաջին փուլին նվիրված հատուկ թողարկման մեջ («Սյունյաց երկիր», N9 (525), 30 ապրիլի 2020 թ.), որում ներկայացվեցին Գորիսի տարածաշրջանի պաշտամունքային վայրերը, Մեծ Իշխանասարի եւ մերձակա սրբավայրերի, նաեւ Վերիշեն, Ակներ գյուղերի տարածքում գտնվող պաշտամունքային վայրերի մասին չքնաղ մի հոդված պատրաստեց մեր թերթի մեծ բարեկամ Գագիկ Հայրումյանը:

Սակայն Մեծ Իշխանասարը յուրովի սկիզբ է (մեր պատկերացմամբ) Սիսիանի տարածաշրջանի քրիստոնեական սրբավայրերը ներկայացնելու համար, որովհետեւ լեռան գագաթից գրեթե ամբողջապես երեւում է Սիսիանի տարածքը: Մյուս կողմից՝ Սիսիանում քիչ տեղեր կան, որտեղից չի երեւում Մեծ Իշխանասարը:

Ուստի եւ որոշեցինք Սիսիանի տարածաշրջանի քրիստոնեական սրբավայրեր կատարելիք մեր ուխտագնացությունը սկսել Մեծ Իշխանասարից:

Եվ 2020 թ. հուլիսի 5-ին հաջողվեց իրականություն դարձնել մեր վաղեմի երազանքն ու բարձրանալ Մեծ Իշխանասարի գագաթ:

Աշխարհագրական տեղեկանք

Իշխանասար լեռնազանգվածի ամենաբարձր գագաթն է Մեծ Իշխանասարը:

Գտնվում է Սյունիքի եւ Արցախի սահմանագլխին, Գորիս քաղաքից հյուսիս-արեւմուտք:

Բարձրությունը 3552 մ է, որոշ աղբյուրներում՝ 3548 մ:

Վերին նեոգենի հրաբխային գոյացում է՝ կազմված հիմնականում դացիտային, անդեզիտա-դացիտային լավաներից:

Լեռնագագաթից դեպի հյուսիս գտնվում է Փոքր Իշխանասարը (3456 մ):

Հյուսիս-արեւմուտքում Իշխանասարը 2500-2700մ բարձրության թամքոցով ձգվում է դեպի Ծղուկի լեռնազանգված:

Հարավից մի ճյուղով միանում է Եռաբլուրներ լեռնագագաթներին:

Գագաթային մասում կա խառնարան:

Արեւելյան եւ արեւմտյան լանջերը զառիթափ են՝ մասնատված հովիտներով:

Արեւելյան ստորոտում է սառցադաշտային ծագման Սեւ լիճը՝ 2666 մ բարձրության վրա:

Սեւ լճից արեւելք Սագի լիճն է, որը Սեւ լճից անհամեմատ փոքր է եւ ամռանը դառնում է սակավաջուր. այդտեղից է սկիզբ առնում Խոզնավար գետը:

Մեծ Իշխանասարը Երեւանից 207 կմ, Վերիշենից 18 կմ, Նորավանից 9 կմ հեռավորության վրա է:

Անվանումը մատենագիտության մեջ

Իշխանասար Մեծը մատենագիտության մեջ գործածվում է մի քանի անուններով՝ Ըշըգլը, Ըշըխլը, Ըշըխլը Մեծ, Ըշըխլու, Իշըխլի, Իշըխլի Մեծ, Իշիխլի, Իշիխլի Մեծ, Իշիխլու, Իշխլու Մեծ, Իշիկլը, Իշխանասար, Իշխլի Մեծ, Իշխլու, Իշղլու Մեծ, Սուրբ Օհաննես, Քաչալդաղ, Քեչալդաղ, Քիլիսալի:

«Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան»-ի (Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան) վերոնշյալ տեղեկատվության առթիվ, սակայն, մի վերապահում ունենք. Քաչալդաղ, Քեչալդաղ անվանումը Մեծ Իշխանասարին վերագրելը կոպիտ սխալ է: Քաչալդաղ կամ Քեչալդաղ լեռը Գլուխ Ձագեձորո լեռն է, որի գագաթը պարզորոշ երեւում է Գորիս քաղաքից եւ առհասարակ տարածաշրջանի շատ վայրերից: Այդ լեռը, որ 2865 մ բարձրություն ունի, Սեւ լիճն արեւմուտքից երիզող լեռն է:

Մեծ Իշխանասարին տրվել է նաեւ Ֆարմաշ, Թարփանմազ անունները:

Մեծ Իշխանասար տանող ճանապարհները

Լեռնագագաթ կարելի է բարձրանալ մի քանի ճանապարհով:

Առաջին երթուղի. Գորիս-Երեւան մայրուղուց Վաղատին տանող ճանապարհից՝ դեպի հյուսիս-արեւելք:

Երկրորդ երթուղի. Գորիս քաղաքի մուտքից (նախկին «Ավանգարդ» տնտեսության անասնապահական շենքերի մոտակայքից) դեպի հյուսիս:

Առաջին եւ երկրորդ երթուղիները հատվում են Էշամեյդանում, որտեղից էլ երթուղին ձգվում է հյուսիս:

Երրորդ երթուղի. Վերիշենի տարածքով (Խոզնավար, Վաղատուր եւ Խանածախ տանող ճանապարհ) բարձրանալ Սեւ լիճ, որտեղից էլ՝ դեպի արեւմուտք:

Չորրորդ երթուղի. Ակների տարածքով բարձրանալ Իշխանասարի ստորոտ, որտեղից էլ դեպի հյուսիս-արեւմուտք:

Ակներից եւ Վերիշենից ձգվող ճանապարհները կարող են հատվել Սեւ լճից դեպի արեւմուտք գտնվող հովիտներում:

Հինգերորդ երթուղի. Սիսիանի Իշխանասար գյուղից (նախկին անվանումը՝ Ղզլջուղ) դեպի Մինքենդ ձգվող դաշտային ճանապարհից հարավ-արեւելք:

Երթուղիներից յուրաքանչյուրը ենթադրում է ժամանակային տարբեր տեւողություն եւ յուրօրինակ ռելիեֆային առանձնահատկություններ:

Մեծ Իշխանասարի ստորոտի յայլաղատեղիներից մեկում

«Սյունյաց երկիրը» վերելքը սկսեց Ակներ գյուղից

Ակները նախկին Բռուն կամ Բուռուն կամ Բռունք գյուղն է՝ Գորիս քաղաքից մոտ 5 կմ հյուսիս-արեւմուտք:

Ակների մոտով է հոսում Գորիս գետը, որի հենց այդ հատվածը կոչվում է Վարարակ:

Գյուղի մոտով է հոսում «Տերտերի առու» կոչվող ջրանցքը, որ կառուցվել է դեռեւս 10-րդ դարում, իսկ դիմացի բարձրադիր վայրում Ակների երկու ՀԷԿ-ն է:

Գյուղի շրջակայքում կան կիկլոպյան կառույցների, միջնադարյան բերդի ու այլ շինությունների հետքեր:

Ակներից ճանապարհ ընկանք հուլիսի 5-ի վաղ առավոտյան՝ ժամը 6-ին:

Ճանապարհ ընկանք Ակների վարչական ղեկավար Սպարտակ Մինասյանի ուղեկցությամբ եւ նրա ամենագնացով:

Գյուղից մինչեւ գյուղի յայլաղներ, որ գտնվում են Մեծ Իշխանասարի ստորոտում, 9 կմ է:

Ճանապարհը համեմատաբար լավ վիճակում է:

Վերելքը սկսվում է սրբավայր ձորից, որի աջ կողմում Խաչին օսն է կամ Սուրբ Հակոբը:

Սրբավայրը ժողովուրդը նաեւ Խաչ է կոչել, Ակնին ճիրին խաչը, Ակնին խաչը:

Խաչին օսի մասին հանգամանալից տեղեկություններ է հաղորդում Գագիկ Հայրումյանը վերոնշյալ հոդվածում:

Խաչին օսից ձախ Ակներ աղբյուրի ակունքներն են:

Խաչին օսի ձորով (քարանձավախմբի արեւմտյան մասով) հոսում է Դաղձուտ գետակը, որը Վարարակի ձախ օժանդակներից է:

Խաչին օսն անցնելու հետո ճանապարհի ձախ մասում մեզ ընդառաջ է գալիս գեղեցիկ մի խաչքար՝ Ակոնի խաչը (հայտնաբերվել է 30-40 տարի առաջ):

Խաչին օսից հյուսիս հայտնի Մթնաձորն է (դրան առանձին անդրադարձ ենք կատարում): Հեռվից երեւում են Ուղտի քաշկառը, Կարմրաքարը:

Մեծ թեքություն ունեցող լեռնալանջը հաղթահարելուց հետո մենք հարթավայրում ենք:

Նախ եղանք Ակների անասնապահների յայլաղատեղիում. վրաններից ծուխ էր ելնում, իսկ մեզ նախեւառաջ դիմավորեցին ուրթի շները: Ապա եղանք Հարթաշենի յայլաղատեղիում, հետո՝ Գորիս քաղաքի անասնապահների մոտ:

Այդտեղ մեզ դիմավորեցին եւ հյուրընկալեցին Համլետ Թոխսանց ու Հերմինե Մաթեւոսյան ամուսինները: Նրանք եկել են Գորիս քաղաքից եւ այդտեղ կազմակերպում են սեփական 1200 գլուխ ոչխարի եւ 70 գլուխ խոշորի ամառային խնամքը:

Նախաճաշելուց եւ նախապատրաստական որոշ աշխատանքներ տանելուց հետո Սպարտակ Մինասյանի ամենագնացով 1-1.5 կմ շարունակեցինք վերելքը, քանի դեռ մեքենան կարող էր բարձրանալ:

Մոտ ժամը 10-ին կանգ առանք լեռան հարավ-արեւելյան ստորոտի այն մասում, որտեղից այլեւս անհնար էր մեքենայի ընթացքը:

* * *

Վերելքը պետք է շարունակեինք ձիերով:

Նախապես այդտեղ էր հասել Գուրգեն Մինասյանը՝ վեց ձիով. երեքը քուռկիկ էին՝ եկել էին զամբիկի՝ իրենց մոր հետեւից: Դրանք Սպարտակ Մինասյանի երամակի լավագույն երիվարներից էին:

Եվ մոտ մեկ ժամ ձիերով ճանապարհ անցանք...

Գորիսի պետական համալսարանի էներգետիկայի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Գուրգեն Մինասյանը, ով քաջածանոթ է այս կողմերի ամեն սար ու ձորի, ամեն քար ու կապի, գնում էր առջեւից՝ իր Սեւուկ նժույգով:

Այնուհետեւ Մարիամն էր՝ Լուսո ձիով:

Վերջում ես էի՝ Ջեյրանը հեծած:

Գուրգենն ընթացքում պատմում էր երեք այդ նժույգի արժանիքների մասին. Լուսոն իմաստուն զամբիկ է՝ ձիավորին հնազանդ, երեք անհանգիստ քուռկիկների անվերջ

Շարունակությունը՝ էջ 4

Ուխտագնացություն Մեծ Իշխանասարի երկնահաս եւ աստղաթաթախ գագաթ

Սկիզբը՝ էջ 3

խաղն անգամ նրա վարգին չէր խանգարում:

Իսկ Ջեյրանը…Ազնվացեղ հովատակ է. ասում են՝ ձի չէ միայն, նաեւ ձիապան է, ձիերի երամակն ինքն է հավաքում եւ ամեն մայրամուտի յայլաղատեղի բերում, նրա ներկայությամբ երամակից որեւէ ձի չի կարող փախչել:

Ձիերն այնքան վստահ էին վերելքը հաղթահարում, քարակույտերը շրջանցում, որ նրանց գավակներին խփելու կարիք չէր լինում:

Եվ, այդուհանդերձ, որպեսզի վստահ լինեինք հարմար թամբերի վրա, ոտքներս դրել էինք ոչ պակաս հարմար ասպանդակների մեջ:

Ավելի թեք տեղերում էլ, սանձը բաց թողած, բռնում էինք ձիերի բաշից…

* * *

Մի կանաչ, հեքիաթային աշխարհ էր բացվել մեր առաջ, եւ ամեն մի թմբի ու բարձունքի հետեւում նոր պատկերների էինք ականատես լինում, երբեմն դադար առնում եւ վայելում այդ գեղեցկությունը:

Եղանակը սկզբնապես զով էր, մի պահ նույնիսկ պայթեցին ամպերը, բայց հետո երկնակամարում երեւաց արեգակը:

Ալպիական այդ վայրերում (ասում են) խոտը համով է եւ յուղաբեր. պատահական չէ, որ սարերի լանջերին՝ տարբեր տեղերում, երեւում էին ոչխարի հոտեր, կովերի նախիրներ:

Մեր գլխավերեւում ժամանակ առ ժամանակ երեւում էին թեւերն ամպերի մեջ թրջված արծիվներ, ագռավներ, ուրիշ հավքերի երամներ:

Մի փոքր ավելի ներքեւ արտույտներն ու տատրակներն էին սեր անում, երբեմն էլ հայրեններ կարդում:

Իսկ գետնի վրա… Ծաղիկների ու գույների իրարանցում:

Մեզ տեսնելով՝ քնաթաթախ ու կապույտ զանգակներն էին ամենուր վեր թռել ու բացվել, ալպիական մանուշակներն էին հանդեսի ելել:

Ծաղիկների մի մասը մեզ անծանոթ էր, ուստի եւ Գուրգենի պարզաբանումն էինք ժամանակ առ ժամանակ ունկնդրում:

Այդ ամենից, ակամա, մեր հոգու կրակն էր թեժանում, այդ ամենից համոզվում էինք վերստին՝ Մեծ Իշխանասարի լանջերը, մերձակա հովիտները միայն բարություն եւ մաքրություն են շաղ տալիս:

* * *

Մեկ ժամ անց եռագագաթ Իշխանասարի հարավ-արեւելյան գագաթի ստորոտում էինք:

Ձիերն այլեւս անկարող էին բարձրանալ. երկար պարաններով կապեցինք քարերից՝ հանգստանալու եւ բուրումնավետ արոտից օգտվելու հնարավորություն տալով նրանց:

Առջեւում մեր ուխտագնացության ամենադժվարին փուլն էր. ամբողջովին քարերով պատված-ծածկված լեռը պետք է բարձրանայինք ոտքով. պահանջվում էր խիստ թեք այդ լանջով բարձրանալ մոտ 700 մետր:

Իրար թիկնած ու ժանիքները սրած քարեր՝ մամռակալած, ծալ-ծալ փեշերով բարձունքներ, միմյանց գլխի թառած ապառաժներ…

Վերելքի այդ հատվածը պահանջեց մոտ մեկ ժամ. ժամը 12-ին լեռան առաջին (հարավ-արեւելյան) գագաթին էինք:

Այդտեղից ավելի հստակ ու պարզորոշ երեւաց երկրորդ եւ երրորդ գագաթ գնալու ուղին:

* * *

Քիչ հանգստանալուց հետո շարժվեցինք դեպի երկրորդ գագաթ:

Ավելի պարզորոշ դարձավ, որ լեռան լանջերը ոչ բոլոր տեղերում են ձմեռային շրջազգեստը հանել:

Տեղ հասնելու համար պետք է հաղթահարեինք ձյան շերտը, ինչը հաճույքով արեցինք:

Երկրորդ գագաթում արդեն մեզ դիմավորեց եւ գուրգուրել սկսեց զմրուխտե զեփյուռը, որը, սակայն, երրորդ ու վերջին գագաթ բարձրանալուն զուգահեռ աստիճանաբար փոխակերպվում էր քամու՝ ձորերի տապից խրտնած եւ լեռնագագաթ բարձրացած քամու:

Ուրցն էր իր խոնավ աչքերը բացել եւ հեքիաթային բույրը տարածել:

Երկրորդ լեռնագագաթից դեպի արեւմուտք եւ դեպի հարավ մեր առջեւ բացվեց Սիսիանի ամբողջ տարածաշրջանը:

Հենց այդտեղից սկսած մեզ հետ, կարծեք, զրույցի բռնվեցին Աղոթարանը, Ուղտասարը, Արամազդը, Կապուտջուղը…

* * *

…Եվ ահա երկնքի մեջ մարգարեացած լեռան ամենաբարձր եւ սրբացած գագաթին ենք:

Ահա Աստծո աստղաջրած՝ սյունիքյան գահաթոռ-վայրում ենք:

Այդտեղ երկնքից մեր ականջին բան են ասում ամպերը, դարերը…

Ներքեւում՝ մեր ոտքերի տակ՝ իրար գլխի թառած, իրար ծոց մտած սարեր են, ձորեր, կիրճեր:

Բազմաթիվ լճակներ են՝ մանկան արցունքի պես ջինջ: Դրանց մարգարիտը, անշուշտ, Սեւ լիճն է, Իշխանալիճը (Սեւ լճին առանձին անդրադարձ ենք կատարում):

Ամենագագաթին երկաթե խաչն է. ասում են՝ Սիսիանի տարածաշրջանի Իշխանասար գյուղի երիտասարդներն են տարիներ առաջ տեղադրել՝ նախկին մատուռի տեղում:

Խաչի ստորին մասում՝ իրար գլխի ժողոված ոչ մեծ քարեր են՝ ներսում՝ վառած մոմեր, կողքը մի քանի շիշ՝ ներսում գրվածքներ պարունակող թղթեր, որոնք չբացեցինք ու չընթերցեցինք (ասում են՝ այդտեղ այցի եկող ուխտավորներն իրենց անուններն ու երազանքները գրում են եւ շշի մեջ դրած պահ տալիս սրբավայրին):

Կար նաեւ մի քար՝ սրբապատկերով, որ համեմատաբար նոր էր:

Մոտ մեկ ժամ լեռնագագաթին մնալուց, առ Աստված աղոթք բարձրացնելուց եւ հավերժից ու հավիտենականությունից մի պտղունց վայելելուց հետո բռնեցինք հետդարձի ճանապարհը:

* * *

Լեռան գագաթին մենք հիշեցինք Գուսան Աշոտին, Համո Սահյանին, ովքեր Մեծ Իշխանասարը հավերժորեն բնակեցրել են նաեւ գեղարվեստական գրականության արեւոտ անդաստանում:

Այդ թեմայով Գուսանի երգերն ու Սահյանի բանաստեղծությունները (ուխտագնացությունից հետո) ներկայացրել ենք առանձին հրապարակմամբ:

Իշխանասար Մեծը՝ Սուրբ Հովհաննես, Սուրբ Ավանես, Սուրբ Օհանես, Սարի սուրբ Վանես, Սարի սուրբ

Մեծ Իշխանասարը կոչվել է նաեւ սրբասար:

Իշխանասարի պաշտամունքային նշանակությանն անդրադարձել է Ստեփան Լիսիցյանը (Զանգեզուրի հայերը, էջ 275). «Վարդավառի օրը հավատացյալները մեծ բազմությամբ դիմում էին սրբազան լեռների գագաթներին գտնված սրբավայրերի այցելությանը: Այստեղ գտնվում էին հրաշագործ գերեզմաններ՝ որեւէ պարզ խաչքարով զարդարված կամ շատ նոր ժամանակների շինված անարվեստ մատուռով հովանավորված: Բարձրանում էին Սարվարդի (Սալվարդի), Իշխանասարի (Իշիխլիի) Սուրբ Օհանեսը եւ Մանավանդ Խուստուփի գագաթները…»:

Ստեփան Լիսիցյանը ներկայացնում է նաեւ տոնակատարության ընթացքն Իշխանասարում. *«Մեծ Իշխանասարը՝ Մեծ Իշիխլին տեղացիներին հայտնի է նաեւ որպես Սրբի Օհանէսի սար: Նա ավելի մատչելի է հյուսի-արեւելյան կողմից, որտեղ նրա ստորոտից ոչ հեռու կանաչ ափերի մեջ ծփում է Սեւ լճի՝ Կարագյոլի կապտավուն հայելին: Հին ժամանակ այժմյան Գորիսի վարչական շրջանի գրեթե բոլոր գյուղերից բազմաթիվ ուխտավորներ, որը ձիով կամ ջորիով, որը բոբիկ ոտով, անողորմաբար բզզելով ծանր անասունը, ընտանիքի մեծ ու փոքրով շրջապատված՝ շտապում էին Վարդավառի տոնին սարը բարձրանալ: Իրենց բեռը ներքեւում՝ սարի ստորոտին թողնելով, նրանք մի քանի արահետներով շարան-շարան ձգվում էին սարն ի վեր դեպի գագաթը, որտեղ կոպիտ խաչքանդակներով զարդարված վիմաքարեր են կուտակված մի անհայտ գերեզմանի վրա: Այստեղ լույսեր՝ մոմեր վառելով՝ կպցնում էին քարերին, վառում էին կոպիտ կավե ճրագների բամբակե պատրույգները, բարեպաշտությամբ համբուրում էին քարերը եւ իրենց ջերմեռանդ աղոթքները դեպի արեւելք առաքելով՝ հայցում էին մուրազների կատարում: Այնուհետեւ իջնում էին սարերից եւ լճից ոչ հեռու մի տափարակ հրապարակի վրա, բերած մատաղացուն մորթում: Քահանաներն իրենց տիրացուների հետ մեկի մոտից մյուսի մոտ վազվզելով՝ իրենց հասանելիք ոչխարի կամ գառան բուրդն ու մորթին էին հավաքում: Շուրջը վխտում էին մանրավաճառներ, խնձորեսկցի աշուղներն այս եւ այն խմբին միանալով՝ իրենց երգի ու նվագի համար մեծարվում էին եւ իրենց վարձատրությունը ստանում»:*

Ուխտագնացության վերջին կանգառում. զրույց ամենալուսավոր, ամենապայծառ, «արցունքի պես ջինջ» Բակունցի մասին

Մեր վերջին կանգառն Ակներ գյուղի յայլաղատեղին էր:

Հյուրընկալվեցինք Սպարտակ Մինասյանի ընտանեկան ուրթում, որ քարե տնակ էր:

Սպարտակի հրաշալի մայրը՝ տիկին Սոսիկն առատալի սուփրա բացեց եւ ամենակարեւորը՝ մեզ գոմշի մածուն առաջարկեց:

Մեր զրույցը նախեւառաջ Իշխանասարի արոտների պրոբլեմների մասին էր: Իսկ խնդիրներից գլխավորն անասունների համար ջրի պակասն էր, թեեւ Մեծ սարի լանջերում բազմաթիվ լճակներ կան, որտեղից կարելի է ջուրը խողովակներով հասցնել յայլաղի այն տեղերը, որտեղ սովորաբար հանգրվանում են ֆերմաները:

Բայց Սպարտակ Մինասյանը շուտով մեր զրույցը տարավ այլ՝ գրականագիտական, ավելի ստույգ՝ Բակունցյան թեմայի ուղղությամբ:

Մորական կողմից Բակունցը սերում է Վերիշենից: Եվ ամենայն հավանականությամբ նա իր Հարություն (Արթին) պապի հետ մանկության տարիներին բազմիցս եղել է Իշխանասարի հովիտներում: Այնպես որ՝ Բակունցը գրականություն էր մտել իր աշխարհից՝ Գորիսից ու Զանգեզուրից եւ դրանց հիման վրա էր ստեղծել իր աշխարհը:

Սպարտակ Մինասյանն Ակների եւ Վերիշենի տարեցներից է լսել՝ տեղանունները, դարձվածքները, որոնցով վերնագրված են Բակունցի շատ գործեր, գրողը վերցրել է հենց այս վայրերից:

Օրինակ «Ալպիական մանուշակ»՝ գլուխգործոցային ստեղծագործությունը…

Նուրբ եւ քնարական այդ պատմվածքի վերնագիրը կարող էր ծնվել միայն Մեծ Իշխանասարի լանջերին փռված դեղնավուն (ծիրանագույն) մանուշակներից: Միայն այդ մանուշակների ազդեցությամբ կարելի էր կյանքի բանաստեղծական ընկալման այնպիսի համադրության հասնել, որ տեսնում եք պատմվածքում:

Կամ «Կարմրաքար» վեպը, որից մեզ հատվածներ են հասել:

Անշուշտ, վեպը Կարմրաքար անունով գյուղի մասին է, որն ավելի ճիշտ 1914-ից առաջ եղած հայկական գյուղերի ընդհանրական պատկերն է:

Արդյո՞ք այդ տեղանունը Բակունցը չի վերցրել Մթնաձորում գտնվող Կարմիր քարից, որ նաեւ Կարմրաքար է կոչվում:

Իսկ Մթնաձորի ասքը (եւ պատմվածքների շարքը, եւ նույնանուն պատմվածքը, եւ «Մթնաձորի չարքը»)…

Հիշո՞ւմ եք, թե ինչպես է սկսում «Մթնաձորը» պատմվածքը. *«Մի ուրույն աշխարհ է Մթնաձորը…»:*

Այդ վայրերում 20-րդ դարասկզբին դեռ հզոր էին առասպելները, հեթանոս

Սյունյաց աշխարհի մարգարիտը՝ Սեւ լիճը կամ Իշխանա լիճը, որ նաեւ Սրբոց սարի ծովակ է կոչվում

Յուլիսի 5-ի օրվա վերջին, երբ «Սյունյաց երկիրը» վերադառնում էր Մեծ Իշխանասարից, մոտեցանք Սեւ լճին (արեւմտյան կողմից) եւ վայելեցինք հեքիաթային այդ գեղեցկությունը:

Լիճը գտնվում է Մեծ Իշխանասար լեռան արեւելյան լանջին՝ 2666 մ բարձրության վրա:

Մակերեսը մոտ 2 քառ. կմ է, երկարությունը՝ 1.6 կմ, լայնությունը՝ 1.2 կմ, առավելագույն խորությունը՝ մոտ 7.5 մ, ջրի ծավալը՝ ավելի քան 9 մլն խմ:

Սնումը հալոցքային եւ մթնոլորտային տեղումներից է:

Սեւ լճի մասին շատերն են գրել, բայց անգերազանցելի ենք համարում ***Գրիշա Մանուչարյանի եւ Տիգրան Գրիգորյանի*** հեղինակած լեգենդը «Սեւ լիճ» վերնագրով, որը, իրապես, գեղարվեստական կատարելության հասցված գործ է, որն էլ ներկայացնում ենք ստորեւ:

Գրիշա Մանուչարյան

Իշխանասար լեռան
Լանջին
Կա մի լճակ
գեղեցկատես,
Հատակը՝ սեղմ, ինքն՝
անչափ ջինջ,
Հսկայական ծագարի
պես:

Նրա շուրջը ծաղկունքի
ծով
Ու զով բուրմունք է ոիղջ ամառ...
Ձեփյուռաշունչ ալիքներով
Նա հովիտն է պահում դալար:

Ինքը՝ լազուր, շուրջը՝ ատլաս,
Ինչպես շրջած կապույտ վրան,
Կարծես երկնից պոկված մի մաս
Ընկել է այդ լեռան վրա:

Դարեր ի վեր այդ լիճը մով
Ձովացրել է սարվորին,
Գառ ու մաքի ջրել սիրով
Ամառային շոգ կեսօրին:

Բայց լիճը չէ, որ ինձ գերել,
Խռովել է հոգիս խաղաղ,
Մի կսկիծ է ինձ պարուրել՝
Մի պատմություն արցունքաշաղ:

Ձեզ կպատմեմ ես այն մասին,
Թե ինչու՞ է կոչվել նա Սեւ,
Երբ դարերով շողը լույսի
Մինչեւ լճի խորքն է հասել...

* * *

Երկու ջահել իրար տեսան,
Իրար անկեղծ սիրեցին...
Աղջիկն ասես՝ սարի շուշան,
Տղան՝ բարդի սլացիկ:

Հանդիպում էր ամեն գիշեր
Սիրած զույգը լճափին,
Բերում իրար զգվանք ու սեր,
Ինչպես գարունն ու արփին:

Բայց հրճվանքն էլ ունի սահման,
Նրա հետ է վիշտն արթուն,
Այնպես, ինչպես լույս ցերեկվան
Միշտ գիշերն է հաջորդում:

Երբ աղջկա հայրն իմացավ
Սիրո մասին այդ զույգի,
Մի իսկական դահիճ դարձավ՝
Անզգա ու անհոգի...

Ու «անպատկառ» իր աղջկան
Այնքան ծեծեց զայրույթից,
Որ մեծացավ այդ լիճն անգամ
Նրա թափած արցունքից:

Հետո նետեց մի մութ վրան,
Ինչպես ժայռի մի խոռոչ,
Որ սպանի սերը նրա՝
Դեռ չծաղկած, դեռ բողբոջ:

– Հարու՛ստ մարդու պիտի գնաս, –
Թնդաց հոր ձայնը դաժան, –
Ի՞նչ ես կպել խեղճ ու տհաս
Էդ հովիվին անարժան...

* * *

Բայց աղջկա սերը մաքուր
Ջորանում էր ինքնակամ,
Ինչպես պարարտ հողի
գրկում
Սերմն է աճում ժամ առ
ժամ:

Մինչդեռ տղան, գիշեր
ու զօր,
Ընկճված ու թեւաթափ՝
Տվայտում էր մտամոլոր,
Մտքով հասնում ափից
ափ:

Տեսնում նրան՝ անօգ տեսքով.
Դեմքը՝ մռայլ, աչքը՝ թաց,
Գութ չունեցող իր հոր կամքով
Եղնիկի պես վանդակված:

Լճի ափին նստում էր նա
Ու տարվում իր սրինգով
Եվ մոռանում վիշտը մի պահ
Իր սրտառուչ նվագով:

Բայց աղջիկը չէր երեւում,
Ասես երբեք չէր եղել...
Խեղճն այն ափին՝ սերը սրտում,
Ծով արցունք էր հեղեղել:

Երբ տղայի ցավն անհատնում
Խորանում է օրեցօր,
Մի գիշեր էլ տղան տրտում
Լիճն է մտնում խենթօրոր:

Ու լողալով ուզում է նա
Հասնել ափը դիմացի,
Ուր աղջիկն էր այրվում մենակ՝
Առանց ծխի ու բոցի:

Բայց կենտրոնում այդ լճակի
Խորասուզվեց խեղճ տղան,
Առանց թաղման ու թափորի
Լիճը դարձավ գերեզման...

* * *

Հենց ի կսկիծ այս պատմության՝
Անվանեցին նրան «Սեւ լիճ»,
Անունն՝ ինչպես գույնը մահվան,
Ինքը՝ հովվի սիրո պես ջինջ:

Իսկ որ լճի ջուրն աղահամ
Չի՛ քաղցրանում դար ու դարեր,
Այդ արցունքն է այն աղջկա
Լճում աղի շերտեր թողել:

Եվ սրինգն են գտել մի տեղ
Հեռու՞- հեռու մի գյուղակում,
Ասում են թե՝ երկար ու նեղ
Անցք է բացված լճի խորքում:

Երբ կեսօրին ամառային
Մաքիներն են ջրի վազում,
Ասես՝ փնտրում են տղային,
Որին աղջիկն է դեռ սպասում...

* * *

Սեւ լճին ուշագրավ անդրադարձ է կատարել մեր հայենակից Գագիկ Հայրումյանը («Սյունյաց երկիր», 30 ապրիլի 2020 թ., N9 (525), Ուխտագնացություն Սյունիք, էջ 42):

Մի հատված Գագիկ Հայրումյանի հոդվածից.

ՍԵՎ ԿԱՄ ԻՇԽԱՆԱ ԼՃԻ ԼԵԳԵՆԴԸ

«Սեւ լճի մեջ ոչ մի գետ, առու, աղբյուր չի թափվում: Անհոսք քաղցրահամ լիճ է, սնվում է հատակից ելնող հոսքերից, մաքուր է, սառնորակ, աճեցվում է իշխան տեսակի ձուկ: Կա այն կարծիքը, որ ձագարաձեւ է, ունի նաեւ ներքին արտահոսք, լողանալու համար վտանգավոր է, կենտրոնում ձգելու հատկություն ունի: Ձմռանը սառցակալում է: Ամռանը նրա ափամերձ խոտառատ արոտներն օգտագործվում են անասնապահական տնտեսությունների կողմից: Լիճը Վարարակնի հովտի բոլոր ակունքների սնուցման աղբյուրն է:

Ասես երկնի լազուրից պոկվել է
մի պատառիկ,
Սուզվել է ու տեղ գտել մեր լեռներում
անառիկ...

ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏ, «ԻՇԽԱՆԱ ԼԻՃ»

Դու ծովակն ես սրբոց սարի,
Քեզնով ցողվեց լույս հայուհին,
Մայր ասեմ քեզ աղբյուրների
Քեզնից կաթիլ թող չպակսի:

ԳՈՒՍԱՆ ԱՇՈՏ, «ԾՈՎԱԿ ԻՇԽԱՆԱ»

Շարունակությունը՝ էջ 6

Տիգրան Գրիգորյան

Կդարերի շունչը, որոնց ազդեցությունը տեսնում ենք «Մթնաձորը» շարքի պատմվածքներում:

Արդյո՞ք Իշխանասարի ստորոտում գտնվող Մթնաձոր տեղանունը չէ, որ գրական աշխարհ է տեղափոխել Բակունցը: Ի վերջո Մթնաձորը ձոր չէ սոսկ, որին մենք անդրադարձ ենք կատարել առանձին, այլ...

Մթնաձորը Զանգեզուր-Սյունիք աշխարհն է: Մթնաձորը Բակունցի համար դարձել է մեծ աշխարհ, մի ուրույն աշխարհ: Եվ այնքան էր Բակունցը խորացել այդ աշխարհում, որ Չարենցը զգուշացրեց՝ *«Աշխատիր, սակայն, որ մութ այդ ձորում / Քո պայծառ ուղին անդարձ չկորչի»:*

Հ.Գ. ...Երանի՜ այն հավքերին, որ ամեն օր բարձրանում են Իշխան Մեծ սարի գագաթ:

Երանի՜ այն ամպերին, որ ժամանակ առ ժամանակ գրկում են Մեծ Իշխանասարի կատարները:

Երանի՜ այն ուխտավորներին, որ նոր-նոր պիտի բարձրանան Սրբասարի գագաթ:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Սյունյաց աշխարհի մարգարիտը՝ Սեւ լիճը կամ Իշխանա լիճը, որ նաեւ Սրբոց սարի ծովակ է կոչվում

Սկիզբը՝ էջ 5

«Նոր եւ հին Կորեսի մեջ (միջեւ) եւ սրան ավելի մոտ 3225 բարձր տեղում կա փոքրիկ ուխտատեղի մատուռ՝ մի աղջկա գերեզման: Ինչպես պատմում են, թե անհավատների բռնաբարությունից խուսափելու պատճառով բարձունքից գահավեժ իրեն նետել է Սեւ լիճը, որը լեռան գագաթին է, եւ ինչ-որ ոխ առնելու համար, կարծում է (պատմող) ռազմիկը, թե մնալով (մտնելով) այնտեղ (ջուրը) կբռնի նույն (տեղն) ընկնողներին եւ չի թողնի ազատվել, ելնել վեր, դուրս»: (Ղեւոնդ Ալիշան «Սիսական», Վենետիկ 1893, էջ՝ 262):

Գագիկ Հայրումյան

Հին ավանդապատումն ասում է, որ Ձագեձորում երկայնաբազուկ երեք եղբայրներ են ապրել, ովքեր տեր ու տիրականն են եղել այս ձորերի: Նրանցից ավագը ժառանգ չի ունեցել: Սրբի դռներ է գնացել, զոհեր է մատուցել աստծուն, բազմաթիվ բարեգործություններ է կատարել, որ իրեն ժառանգ տրվի: Եվ երբ արդեն բավական տարիքով է եղել, եկել է վաղուց սպասվող այդ ուրախությունը, եւ իշխանի կինը դուստր է ունեցել: Շուտով նրանց դռանը հայտնվել է մի դերվիշ եւ իշխանից մի արծաթ է պահանջել, որ ասի դստեր ճակատագիրը: Չինվորները նրան քշել են երկրի սահմաններից դուրս: Հեռանալիս դերվիշն ասել է, որ իշխանադուստրը դժբախտ գեղեցկուհի է, դաժան ու անսովոր ճակատագիր է նրան տրված: Այս միտքն օր–օրի տանջել է հորը: Նա մտորումների մեջ է ընկել, հազար ու մի վարկած է մտածել եւ որոշել է՝ դստերը մեծացնել իբրեւ տղայի: Նրա մարդիկ նախ լուրեր են տարածել, թե իբր իշխանի կինն իրականում տղա է ունեցել, բայց աղջիկ է ասվել, որ աչքով չտան, որ օրորոցագողի ականջը չընկնի: Եվ, այնուհետեւ, իշխանն ու նրա մարդիկ սովորեցրել են աղջկան այն ամենը, որ հատուկ էր իսկական զինվորին: Պատանու շորերով այդ պարմանուհին շուտով դարձել է ճարպիկ հեծյալ, նիզակահար, թրամարտիկ, գորգի վրա գետնով է տվել ցանկացած հասակակից պատանու, լողացել, անցել է Իշխանա լիճը, մագլցել, բարձրացել է Պղնձաքարի ժայռափեշերով, հոր հետ որսի է գնացել Սյունյաց երկրի լեռներն ու Մթնաձորի անտառները:

Եվ օրերից մի օր ահավոր մրրիկը պատել է սար ու ձոր, Կարա–կոյունլու ցեղի Կարա–Մուհամմեդ խանի յաթաղանը կախվել է Սյունիքի վրա, ամենուր արյուն է հեղվել, եւ ահ ու սարսափ է տարածվել: Երկայնաբազուկ Մեծ իշխանի վրանները խփված են եղել Իշխանա լճի ամառանոցում: Լուսածեգին, երբ յայլավորը դեռ չէր հասցրել արթնանալ, բռնապետ հրոսակը գաղտագողի մոտեցել, շրջապատել, ավերել է ամառանոցը, գերել է իշխանին ու նրա մարդկանց: Վրաններից մեկում՝ մահճի մեջ քնած, նրանք գտել են իշխանի դստերը:

– Միայն խանի հարեմին է արժանի այս գեղեցկությունը, – ասել է ասկյարների յուզբաշին ու, պահելով թուրը գերված իշխանի կրծքին, ասել է, որ կազատի բոլորին՝ աղջկան տանելու պայմանով: Հայրը մերժել է: Ասկյարները դստեր աչքի առաջ սպանել են հորը, եւ ձեռքերն ու ոտքերը կապած աղջկան նետել են ձիու վրա: Յուզբաշին նստել, մտրակել է նժույգը՝ ժամ առաջ խանին հասցնելու այդ թանկարժեք ավարը:

Ճանապարհին կատարվել է անհավատալին: Աղջկան հաջողվել է ազատվել կապանքներից, յուզբաշու կողքից քաշել, հանել է նրա թուրը եւ հենց ձիու վրա նրան սրախողխող է արել: Գետնին նետելով արյունարբու գազանին, նա ցատկել է թամբին ու մտրակել նժույգը: Աղջկան հետապնդել են տասնյակ ու հարյուրավոր ասկյարներ: Փախչել նրանցից՝ անհնար է եղել: Աղջիկը հասել է Իշխանա լճին, ձին քշել է հենց ջրի մեջ եւ իրեն նետել է ալիքների վրա: Ջրի տակ անցնելով՝ քիչ հետո դուրս է եկել լճի կենտրոնում:

– Բռնել միայն կենդանի, – լսվել է հրամանը եւ հարյուրավոր զինվորներ թափվել են լիճը: Նրանք լողացել են դեպի աղջիկը, բայց դեռ լճի կենտրոն չհասած՝ կորել, անհետացել են: Կարծես ինչ– որ մի հրեշ ջրի տակ սպասել ու կուլ է տվել նրանց: Անցել են ժամեր, նորանոր խմբեր են մտել լիճը, եւ ոչ ոքի չի հաջողվել հասնել ջրի ալիքների հետ խաղացող աղջկան: Այսպես, մինչեւ ուշ գիշեր, լճի հրեշը կուլ է տվել զորքի մեծ մասը: Ասկյարների կատաղած զորապետը պահանջել է խարույկներ վառել լճի շուրջը եւ բռնել աղջկան, եթե գիշերը փորձի որեւէ տեղ դուրս գալ ջրից:

Լուսաբացին աղջիկը ջրի երեսին արդեն չի երեւացել: Հրոսակը հեռացել է նոր ոճիրներ գործելու: Մեկ–երկու օր հետո մարդիկ նկատել են ջրի վրա լողացող մի մարմին: Նրանք հանել են աղջկա դին, տարել մի բարձր տեղ թաղել, որ սովորական մահկանացուներից տարբերվի նրա գերեզմանը:

Ասում են, որ այդ ժամանակից ի վեր Իշխանա լիճը սրբավայր է դարձել ու ստացել իր երկրորդ անունը՝ Սեւ լիճ: Ասում են, որ Սեւ լճի հրեշն այսօր էլ կա, որ նա կուլ է տալիս ջուրը մտնող բոլոր չարերին, բարբարոսներին, անհավատներին»:

//

Գլուխ Ձագեձորո (Քաչալ դաղ)

Եւս մեկ դրվագ Սրբոց սար կատարած ուխտագնացությունից. Մթնաձորից լույս է ծորում

Հուլիսի 5-ին Մեծ Իշխանասար կատարած մեր ուխտագնացության որոշ դրվագներ արդեն ներկայացրել ենք:

Հարկ ենք համարում եւս մի դրվագ առանձնացնել, որը, անշուշտ, ուշագրավ է եւ շատերի համար նորություն:

Առաջին կանգառը Խաչին օսն էր:

Մեզ հետաքրքրում էր ոչ միայն այդ սրբավայրը, այլ...

Խաչին օսից հյուսիս Մթնաձորն է...

Անշուշտ, վերելքի կեռմաններից դեռ պետք է դիտեինք Մթնաձորը, Մթնաձորի Կարմիր քարը (Կարմրաքարը), Ուղտի քաշկառը, բայց հաճելի էր Մթնաձորը դիտարկել նախ հարավից ու տեսնել, թե ինչպես է Դաղձուտ գետակը Մթնաձորի խորքերից շտապում դեպի Վարարակնի գիրկը:

Մթնաձորի մեր ընկալումը չենք ներկայացնի, քանզի...

Կներկայացնենք Գրիշա Մանուչարյանի եւ Տիգրան Գրիգորյանի համահեղինակությամբ արարված «Մթնաձոր» լեգենդը, որը հրաշալի է պատմում այդ ձորի, նաեւ դրա շուրջ հյուսված ավանդազրույցների մասին: Եվ ամենակարեւորը՝ դարերի հեւք կա այդ լեգենդում, պատմության, ժողովրդական բանահյուսության նշխարներ կան այդ խոսքում: Եվ, որքան էլ զարմանալի է, Մթնաձորից այս դեպքում լույս է ծորում...

ՄԹՆԱՁՈՐ

Մի զարհուրելի խոր ձոր կա մթին,
Գորիսից վերեւ՝ լեռների գրկում,
Ու թե հավատանք հին զրույցներին՝
Չարքեր են այնտեղ վաղուց բնակվում:

Նրա եզրերին՝ կանգնած ահազդու՝
Ժայռեր կան՝ շարված հսկաների պես,
Եվ թվում է, թե երկինքը լազուր
Նրանք են պահում այդքան բարձր ու վեհ:

Թե փորձեք ձորին վերեւից նայել՝
Ոչինչ չեք տեսնի դուք բացի ամպից,
Որը ճամփան է արեւի փակել,
Դարձել լույս-մութի մի սահմանագիծ:

Մռայլ խավարն է այդ ձորի տերը,
Անգամ գետն էլ չի այնտեղ երեւում,
Կարծես աշխարհի ողջ գիշերները
Ժողովվել են այդ ահավոր ձորում...

* * *

Իսկ լեգենդը այս է ասում.
Մեզնից առաջ՝ դար ու դարեր,
Բնակվում էր հին Գորիսում
Չքնաղ աղջիկ մի թխահեր:

Մորից զրկված զավակ էր նա,
Կույր գուսանի դուստր անգին,
Որ գթասիրտ իր հոր նման
Հավատով էր նայում կյանքին:

Արարիչն այդ լույս աղջկան
Անհու՞ն սիրով էր արարել
Ու կախարդիչ գեղեցկության
Ողջ թովչանքը նրան տվել:

Երբ ժպտում էր, եղեմական
Վարդեր էին շուրջը բացվում,
Եվ լեռնաշխարհը հայկական
Իրենց անուշ բույրով լցնում:

Երբ տխրում էր, տխրում մեկից
Ու լաց լինում նա մեղմաբար,
Անձրեւն իսկույն լուրթ երկնքից
Մարգարտաշար թափվում էր վար:

Նա ապրում էր մարդկանց վշտով,
Նրանց խինդով ուրախանում,
Այդ աղջկա մասին շուտով
Ամբողջ Սյունիքն է իմանում:

* * *

Պատմում է սակայն լեգենդը ցավով,
Թե ձորի խորքում դարանակալած,
Մութ մարդիկ էին ապրում դարերով՝
Դաժան դեւերի կերպարանք առած:

Չարի հետ էին լույս աշխարհ եկել
Եվ պատսպարվել քարանձավներում,
Կույս աղջիկներին միշտ առեւանգել,
Սարսափ տարածել Սյունյաց աշխարհում...

Եվ ահա մի օր նրանց տուն մտան
Մարդակերպ դեւերն այդ հրեշավոր,
Խլեցին հորից հրաշք աղջկան,
Փախցրին, տարան ձորն անդնդախոր:

Հայրն անհուն ցավից ավանդեց հոգին՝
Տանելով իր հետ վիշտն իր անդարման,
Աշխարհում թողած մի կորած աղջիկ,
Ինչպես ծովն ընկած մի լույս ադամանդ...

* * *

Ասում են, թե այն աղջկա մորմոքից,
Անմա՛փ վշտից խավարում է ձորն այդ խոր,
Մարդիկ սոսկում, սահմռկում են այդ ձորից
Ու սարսափած այն կոչում են Մթնաձոր:

Իսկ մշուշը, որին այնտեղ վերջ չկա,
Որ հավետ է իջեւանել այդ ձորում,
Ասում են, թե հառաչն է այն աղջկա,
Որ մինչ այսօր սգում է իր անձավում:

Երբ կայծակն է երկնի կուրծքը ակոսում,
Այդ ցասումն է նրա ցոլուն աչքերի,
Երբ անձրեւ է հաճախ տեղում Գորիսում,
Այդ էլ նրա լացն է անլուր վերքերի:

Մթնաձորում ամեն եկող նոր տարի,
Երբ արեւն է մի պահ ամպի հետ խաղում,
Ասում են, թե հավերժորեն կենդանի՝
Այդ աղջիկն է իր քնի մեջ ծիծաղում...

//



Վախճանվել է Սյունյաց աշխարհի նշանավոր զավակ, գրականագետ Կիմ Աղաբեկյանը

Հուլիսի 24-ի լույս 25-ի գիշերը մահկանացուն է կնքել Սյունյաց աշխարհի նշանավոր զավակ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կիմ Բագրատի Աղաբեկյանը:

Ծնվել է 1938 թ. մարտի 15-ին Գորիսի շրջանի Հարժիս գյուղում:

1966 թվականին ավարտել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը:

1972 թվականին «Գուրգեն Մահարի» թեմայով ատենախոսություն է պաշտպանել եւ ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան:

1994 թ. ստացել է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան (թեման՝ «Արդի հայ արձակի զարգացման միտումները. 60-80-ական թթ.):

1968-69 թթ. աշխատել է Երեւանի պետական համալսարանի Հայ գրականության ամբիոնում՝ լաբորանտ:

1971 թվականից դասախոսում է Երեւանի պետական համալսարանում:

1978 թվականից եղել է ԽՍՀՄ գրողների միության անդամ:

1995 թվականին ստացել է բանասիրական գիտությունների պրոֆեսորի աստիճան:

Կիմ Աղաբեկյանը 2013 թվականին պարգեւատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:

* * *

«Սյունյաց երկրի» խմբագրակազմը խորապես վշտացած է մեր նշանավոր հայրենակցի, «Սյունյաց երկրի» բարեկամի՝ Կիմ Աղաբեկյանի մահվան կապակցությամբ եւ ցավակցում է նրա հարազատներին ու մերձավորներին: //

Կիմ Աղաբեկյանի երկերի եւ հոդվածների մատենագիտություն

Երկեր

- Գուրգեն Մահարի, Երեւան, Երեւանի համալսարանի հրատարակչություն, 1975 թ., 272 էջ,
- Երեք դիմանկար (գիրքը նվիրված է Բաղիշ Հովսեփյանի, Մկրտիչ Սարգսյանի եւ Զորայր Խալափյանի երկերի քննությանը), Երեւան, «Սովետական գրող», 1983 թ., 272 էջ
- Հրանտ Մաթեւոսյան. Ծմակուտի վիպասքը, Երեւան, Երեւանի համալսարանի հրատարակչություն, 1988 թ., 356 էջ,
- Արդի հայ արձակի զարգացման միտումները. 1960-80 թվականներ, Երեւան 1992 թ.:
- Հակոբ Օշական. Ստեղծագործական աշխարհի արահետներում, Երեւան 2006 թ.
- Հոդվածների ժողովածու, Երեւան, Երեւանի համալսարանի հրատարակչություն, 2016 թ., 256 էջ:

Հոդվածներ

- Կորուսյալ եզերքի գեղարվեստական պատկերը Մուշեղ Գալշոյանի ստեղծագործություններում, «Գրական թերթ», թիվ 4, Երեւան 2014, էջ 4
- Համո Սահյանի եւ նրա պոեզիայի նվիրյալը, «Սյունյաց երկիր», թիվ 6, 2014, էջ 5-6
- Գուրգեն Մահարի, Երեւան 2013, 263 էջ
- Մտորումներ Բակունցի «Կարմրաքար» վեպի շուրջ, «Սյունյաց երկիր», թիվ 25, 2013, էջ 5-8
- Կյորեսը եւ կյորեսցիները Բակունցի երկերում կամ շարունակվում է Շենի հին կռիվը, «Սյունյաց երկիր», թիվ 10, 2011
- Մեծ բարեկամության լուսեղեն հետագիծը, «Գրականագիտական հանդես», թիվ Ա/Բ/
- Քրիստոնեական վարդապետության հայկականությունը, Երեւան 2008
- Հայ գրականությունը հայ ժողովրդի ճակատագրի խտացումն է, Երեւան 2003
- Հաճելի հանդիպում, Երեւան 2003
- Խալափյանի հերոսները մեզ հետ են ու մեր կողքին, Երեւան 2003
- Հ. Օշականի «Հարիւր մեկ տարուան» եռապատումը, «Բանբեր Երեւանի համալսարանի», 2 (107), Երեւան 2002թ., էջ 113-125
- Ազնիվ ու շիտակ ապրած տարիների վաստակը, Երեւան 2002
- Չարենցը Հակոբ Օշականի գնահատմամբ, «Չարենցյան ընթերցումներ-7», Երեւան 2002
- Չարենցի «Երկիր Նաիրի» վեպի ավանդները, «Չարենցյան ընթերցումներ-7», Երեւան 2002
- Մեծ աշխարհի նախաշեմին, «Նոր դար», թիվ 2, Երեւան 2001
- Հակոբ Օշականի «Ծակ Պտուկը» վեպը, «Բանբեր Երեւանի համալսարանի», 3 (102), Երեւան 2000թ., էջ 45-61
- Օշականի վիպական աշխարհի մատույցներում, «Գարուն», թիվ 2, Երեւան 2000
- Իսահակ Ալավերդյանի նոր գիրքը, «Գրական Ադրբեջան», թիվ 10, Երեւան 1977
- Ժամանակակից հերոսի որոնումները, «Սովետական գրականություն», թիվ 10, Երեւան 1975
- Խոստումնալից ամառ, «Սովետական գրականություն», թիվ 8, Երեւան 1974
- Մահարու «Մրգահասը» Չարենցի գնահատությամբ, «Չարենցյան ընթերցումներ», Երեւան 1973: //

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի կարծիքը՝ հանրակրթության պետական առարկայական չափորոշիչների եւ ծրագրերի մասին

Սկիզբը՝ էջ 1

հայ գրականությունը տարրալուծվում է ոչ լիարժեք համաշխարհային գրականության մեջ. եվրոպական ու ամերիկյան մի քանի գրողների երկերի ներառումը ծրագիր, առանց Արեւելքի եւ ռուս գրականության, չի կարող ներկայացվել իբրեւ համաշխարհային գրականություն: Այս ծրագրով ու չափորոշիչներով փաստորեն վերանում է «Հայ գրականություն» առարկան՝ իբրեւ դպրոցական կրթության նպատակային բաղադրիչ, որով նվազեցվում, աղճատվում է կրթության ազգային բովանդակությունը, ինչը հակասում է պատերազմող երկրի թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքականությանը եւ ընդհանուր ռազմավարությանը: Մինչդեռ հայ դպրոցն իրավունք չունի առանց ազգային նկարագրի «աշխարհաքաղաքացիներ» դաստիարակելու, ինչն առաջարկվում է հրամցվող ծրագրով ու չափորոշիչներով:

2. Առանց պատճառաբանության եւ հիմնավորման արմատապես փոխվել է հանրակրթական դպրոցում գրականության դասավանդման մեթոդաբանությունը. ժամանակագրական մեթոդը փոխարինվել է գրականության սեռաժանրային ուսուցմամբ, որն անընդունելի է:

3. 7-12-րդ դասարաններում ամբողջ հինգ տարի աշակերտները նույն գործն են անելու, հայ եւ արտասահմանյան գրականությունը վերլուծելու են բանաստեղծության, դրամատուրգիայի եւ արձակ երկերի համադրությամբ կամ հակադրությամբ, լեզվի, ոճի, պատկերի, բառապաշարի եւ տեքստային այլ հատկանիշների բացահայտմամբ: Այսինքն՝ չնչին տարբերությամբ, ըստ գրական երկի տված հնարավորության, դուրս չեն գալու նույն շրջանակներից:

4. Այս փոփոխությունն արդեն իսկ հնարավորություն չի տալիս ծրագրերում ներառելու հայ հին ու միջնադարյան գրականությունը, որը չի ենթարկվում վերոնշյալ սեռաժանրային բաժանմանը: Ուստի այն հայտարարությունը, թե այդ հարցն արդեն շտկվել է, անհնար է սույն համակարգի պայմաններում:

5. Ժամանակագրական մեթոդը թույլ է տալիս պահպանելու ազգային հիշողությունը, որն արտահայտվում է եւ՛ պատմության, եւ՛ գրականության մեջ, մինչդեռ առաջարկվող համակարգը խառնում է ժամանակներն ու ազգությունները: Կամա թե ակամա դա վերացնում է նաեւ հնագույն քաղաքակրթություն ունեցող ազգերի եւ նորերի տարբերությունը՝ չեզոքացնելով հների ներդրումը համաշխարհային մշակույթի պատմության մեջ: 5-րդ դարի մեր պատմագրության բարձր արժեքը մեծապես պայմանավորված է նրանով, որ ստեղծվել է հենց 5-րդ եւ ոչ թե 15-րդ դարում, երբ ժամանակակից ազգերից ու պետություններից շատերը դեռեւս չկային:

6. Արմատապես սխալ է ոմանց այն հայտարարությունը, թե այդպիսով իբր դպրոցն ուզում են դարձնել բանասիրության ֆակուլտետ: Դպրոցական եւ բուհական ծրագրերն ունեն ուսուցման խորության բոլորովին տարբեր աստիճաններ: Մի՞թե պարզ չէ, որ բուհական ծրագիրը ենթադրում է 5-րդ դ. մատենագրության եւ միջնադարի տաղերգության ավելի խոր՝ մասնագիտական յուրացում՝ նախապես միասնաբար դրսեւորված պատմագրության եւ գեղարվեստական պատկերավորման յուրահատկությունների տարբերակումով:

7. Ամենակարեւորը. նոր չափորոշիչները հնարավորություն չեն տալիս որեւէ գրողի մասին ամբողջական պատկերացում ստեղծելու: Օրինակ՝ Թումանյանի «Փարվանան» եւ «Թմկաբերդի առումը» նախատեսված է անցնել 8-րդ դասարանում, «Սասունցի Դավիթ» պոեմը՝ 9-րդում, 10-րդում՝ «Անուշը», 11-րդում՝ քառյակները: Այդպես նաեւ մյուս գրողները: Որեւէ գրող չի ներկայանում իր ամբողջական դիմանկարով:

8. Այս շիլաշփոթն ունի մեկ հիմնավորում՝ դաստիարակել ինքնուրույն մտածող, ինքն իրեն ճանաչող, վերլուծող, տրամաբանող, ընդհանուր առմամբ սոցիալապես ակտիվ անհատ: Դա, անշուշտ, լավ է, բայց ինչո՞ւ այս եղանակով:

9. Չափորոշիչները կազմված են անորոշ ու ճապաղ՝ դասարանից դասարան կրկնվող սահմանումներով: Նկատվում են գրականագիտական տերմինների անպատեհ կիրառություններ («տեքստը տեքստում», «միջտեքստայնություն», «նարատոր» եւ այլն), որոնք ծրագիրը մոտեցնում են գրականագիտության բուհական դասընթացներին:

10. Շատ թերի, խառնիխուռն ու անորակ են հայ եւ համաշխարհային գրականությունից վերցված ցանկերը: Բացակայում են դրանց ընտրության սկզբունքները: Ակնհայտ է, որ երկերն ընտրված են ոչ թե մասնագիտական բազմակողմ գնահատման արդյունքում, այլ ընդամենը հանձնաժողովի խմբի նախասիրությամբ, պահի տպավորությամբ եւ ՀՀ քաղաքացու փոխարեն աշխարհաքաղաքացի կերտելու անիմաստ նպատակադրումով:

11. Դրական է ժամանակակից գրողների եւ գրականության՝ ծրագրերում ներառելու խնդիրը: Դրական է աշակերտներին կենդանի գրականության հետ կապելու, ժամանակի գրողներին ճանաչելու իմաստով: Բայց սա թերեւս ամենաբարդ խնդիրն է երկու իմաստով: Նախ՝ նոր գրողներին ծրագրերում ներառելու համար պետք է կրճատել դասականներին, ինչը վաղ թե ուշ անհրաժեշտություն է դառնալու: Բայց պետք է նոր եկողները արժանի լինեն հների տեղը կամ առնվազն նրանց կողքին տեղ գրավելու: Ապա՝ նոր գրողներին ներառելու համար պետք է հաշվի առնել գրողների միության, գրականագետների կարծիքը եւ, անշուշտ, նրանց ստեղծած գրական արժեքը: Նոր անուններին կարելի է ծանոթանալ միջին դպրոցում, գրական խմբակներում, արտադասարանական ընթերցանության միջոցով:

12. Ծրագրում չնչին չափով է ներկայացված հայ դասական գրականության կարեւորագույն մի հատվածը՝ սփյուռքահայ գրականությունը, որը ծանր հարված է մեր ժողովրդի եւ հայրենիք-սփյուռք միասնության գաղափարին:

13. Ուսուցչին տրվում է անկառավարելի ազատություն. նա իր ցանկությամբ կարող է ընտրել եւ մատուցել հայ եւ արտասահմանյան գրողների երկերը: Իսկ եթե ուսուցիչն ու աշակերտը իրենց ճաշակով ընտրեն միայն արտասահմանյան գրողների՞ն, եւ հայ գրողներն ու նրանց լավագույն երկերը

Շարունակությունը՝ էջ 8

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի կարծիքը՝ հանրակրթության պետական առարկայական չափորոշիչների եւ ծրագրերի մասին

Սկիզբը՝ էջ 7

դո՞ւրս մնան: Այս դեպքում ինչպե՞ս են կազմակերպվելու գիտելիքի ստուգումները ավարտական դասարաններում, ազատ տրված գիտելիքի ո՞ր շրջանակն է լինելու պարտադիր ստուգելի:

14. Հանձնախմբի անդամները, իբրեւ իրենց «բարեփոխումների» հիմնական փաստարկ, բերում են այն հիմնավորումը, որ նոր չափորոշիչներով երեխան ոչ թե պետք է կարդա հանրահայտ վերլուծությունները, սովորի եւ հետո կրկնի դրանք, այլ կարողանա կատարել ինքնուրույն վերլուծություններ: Շատ հետաքրքիր է՝ ինչու պետք է ինքնուրույն վերլուծության հմտությունը կիրառվի հենց գրականության վրա. ի՞նչ է, գրականությունը այդքան հեշտ կամ սուբյեկտիվ ոլո՞րտ է: Այդ դեպքում չէր լինի գիտություն գրականության մասին՝ գրականագիտություն: Դա նույնն է, որ հայոց պատմության դրվագները թույլ տանք ինքնուրույն վերլուծել ու մեկնաբանել կամայականորեն: Այս շարքը կարելի է անվերջ շարունակել: Ճիշտ հակառակը, գրականության ուսուցումը պետք է դնել գիտական լուրջ հիմքերի վրա, աշակերտին ուղղորդել, բացատրել այս կամ այն գրողի կատարած դերը մեր ազգային գրականության եւ գեղարվեստական մտածողության զարգացման մեջ: Ինչպե՞ս պետք է երեխան իմանա, թե ինչպիսի կարեւոր դեր է կատարել Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին» մեր նոր գրականության ձեւավորման եւ զարգացման գործում, ինչպե՞ս է ազդել հետագա շրջանի հայ գրողների ամենատարբեր սերունդների վրա, եթե դասագիրքը նրան չուղղորդի: Ինչու չէ, նաեւ անուրանալի ճշմարտություններ պետք է հաղորդել, որոնք աշակերտը նախ պիտի սովորի, հետո ինքնուրույն մեկնաբանի:

15. Դեռեւս Աստվածաշնչից եկող միտք է, որ օգտագործում է նաեւ Հրանտ Մաթեւոսյանը, թե նախ՝ պարտվում են մշակույթները, հետո՝ միայն պետությունները: Առաջարկվող նախագիծ-ծրագիրը պարտության տանող ծրագիր է: Այն, ինչ կարող է թույլ տալ հզոր պետությունը, ասենք ԱՄՆ-ն, որի կրթական ծրագրերի ազդեցությունն առկա է այս ծրագրում, չի կարող թույլ տալ փոքրաքանակ (ոչ փոքր, թող սխալ չհասկացվի) ժողովուրդը, որի համար մշակույթը եւ առաջին հերթին կրթությունն ունեն ռազմավարական, ազգապահպան նշանակություն: Ըստ այսմ՝ հայ դասականների զգալի մասին ծրագրերից դուրս մղելը, հայ գրականության «հայ» բառի վերացումը մեծապես վնասում են ազգի շահերին:

Բ) Հայոց լեզվի նախագիծը խոտելի է հետեւյալ պատճառներով.

1. Անհիմն է նախագծի արդիականության հիմնավորումը (բառագործածության անճշտությունները չենք քննարկում): «Արդի աշխարհում տեխնիկայի եւ գիտության սրընթաց զարգացումը նոր խնդիրներ է դնում կրթության առջեւ: Բազմաթիվ մասնագիտություններ, որոնք այսօր հարգի են, շուտով փոխարինվելու են մեքենաների եւ ռոբոտների աշխատանքով: Ահա այդ է պատճառը, որ հանրակրթական դպրոցում հայոց (մայրենի) լեզվի եւ գրականության ուսուցումը եւ ուսումնառությունը եւս հիմնավոր փոփոխության կարիք ունեն»: Լեզուն բացարձակ արժեք է եւ անկախ մասնագիտությունների հարգի կամ վերացող լինելուց՝ գոյություն է ունենալու:

2. Նախագծում գիտությամբ կամ անգիտությամբ աղճատվել է լեզվի դերը: Լեզուն ոչ միայն մտածողության միջոց է, այլեւ ու նախ եւ առաջ ազգային մտածողության ձեւավորման միջոց, ազգային ինքնության կարեւորագույն բաղադրիչ, ազգային-հայրենասիրական նկարագիր կերտելու գործիք. նախագծում ոչ մի կերպ արտահայտված չէ այս գաղափարը, մինչդեռ հենց դա պետք է դրված լիներ չափորոշիչների հիմքում. ՀՀ հանրակրթական դպրոցում հայոց լեզուն պետք է ուսուցանվի այս ելակետով եւ այս հիմունքով:

3. Եռաչափ կրթական համակարգի ներդրում ասվածը կասկածելի «նորույթ» է: Ավելացվել է հասկացություն հասկացակարգը: Նախկին գիտելիք-հմտություն ձեւաչափից անցում է կատարվում հասկացություն-գիտելիք-հմտություն/ կարողություն ձեւաչափին: Իսկ մի՞թե ցանկացած գիտելիքի մատուցում, ճանաչում, յուրացում չի սկսվում հասկացությունների մեկնաբանությունից:

4. Հայոց լեզվի եւ հայ գրականության ուսումնառության հայեցակարգերը նույն չափանիշներով եւ նույն հիմնավորումներով ներկայացնելը անընդունելի է. Հայոց լեզուն եւ Հայ գրականությունը տարբեր առարկաներ են (եւ ուսումնասիրվում են տարբեր գիտակարգերում), հետեւաբար որոշակիորեն տարբեր են նաեւ դրանց ուսուցման նպատակներն ու մեթոդները: Հայոց լեզուն պետք է նկարագրվի եւ ներկայացվի որպես առանձին առարկա: Մինչդեռ ակնհայտ է, որ հայոց լեզվի եւ գրականության նախագծերը կազմվել են գրեթե նույն սկզբունքներով եւ որոշ ընդհանրություններ ունեն անգամ բնագիտական առարկաների նախագծերի հետ: Հասկանալի է, որ կիրառվել են միջազգային կրթական ծրագրերին հարմարեցնելու ինչ-ինչ գործիքներ, սակայն դրանք գործածվել են սխալ եւ անպատեհ: Ընդհանրություններով հանդերձ՝ սրանք էապես տարբեր առարկաներ են, եւ չափորոշիչներն էլ պետք է շատ հստակ տարբերվեն ոչ միայն բովանդակությամբ, այլեւ վերջնարդյունքների եւ նպատակների սահմանումներով: Խոտելի է նախագծի ելակետային միտքը, թե «հայոց լեզվի եւ գրականության ուսումնասիրության հիմնական նպատակը բանավոր եւ գրավոր խոսք կառուցելու, տեքստ ստեղծելու ուսուցումն է»:

5. Նշվում է, որ աշակերտը ուսուցչի հետ միասնաբար պետք է կազմի դասի պլանավորումը՝ առաջնորդվելով իր հետաքրքրություններով: Խիստ վիճելի պահանջ է: 12-17 տարեկան երեխաների հետաքրքրության շրջանակը, արժեքային համակարգի ընկալումներն ու պատկերացումները դժվար թե համընկնեն ծրագրային պահանջներին. այդ տարիքում եւ դեռեւս նոր գիտելիքներ ձեռք բերելու ճանապարհին աշակերտը հաստատապես չի կարող ըստ ամենայնի ճանաչել եւ արժեւորել, օրինակ, քերականության կամ ոճաբանության կարեւորությունը: Սա հանրակրթական ծրագիր է, եւ ուղղորդողները նախ եւ առաջ չափորոշիչներն են, դասագիրքը, ուսուցիչը:

6. Աղքատիկ է ծրագրի լեզվական-բովանդակային մասը. նախագիծը չի ենթադրում հայոց լեզվի վերաբերյալ բավարար գիտելիքների մատուցում: Վերջնական նպատակը՝ գրավոր եւ բանավոր հաղորդակցմանը ըստ ամենայնի տիրապետելը, եթե համարենք «ազնիվ», միեւնույնն է, եւ՛ գրագետ հաղորդակցվելու, եւ՛ ազդեցիկ խոսք կառուցելու, եւ՛ ստեղծագործական միտքը զարգացնելու համար սովորողին նախ եւ առաջ պետք է մատուցել լեզվական անհրաժեշտ բավարար գիտելիքներ: Հետո միայն ստացած գիտելիքները պետք է վերածել կարողության ու հմտության: Ծրագիրը այս խնդիրը լուծում է մասամբ:

7. Պակասում են կամ թերի են ներկայացված մի շարք թեմաներ.

- Լեզվի հնչյունական համակարգը նեղ իմաստով միայն ուղղագրությունը եւ ուղղախոսությունը չէ: Նախորդ տարիներին (մինչեւ 7-րդ դասարան) ուսուցանվող նյութը բավարար չէ: Հնչյուն, շեշտ, վանկ, տառադարձություն, հնչյունափոխություն թեմաները հանգամանորեն պետք է ներկայացված լինեն նաեւ միջին դպրոցում, ապա առավել խորությամբ՝ ավագ դպրոցում: Հնչյունափոխական իրողությունների ուսուցումը անչափ կարեւոր է գրագետ, բարեհունչ եւ գեղեցիկ խոսք կառուցելու, ճիշտ խոսելու համար:
- Տարտամ ու անորոշ նկարագրություն ունի լեզվի կարեւոր բաժիններից մեկը՝ բառագիտությունը: Նախագծում տեղ է գտել արտառոց մի ձեւակերպում, ըստ որի՝ լեզվի երեք մակարդակներից մեկը ոչ թե բառագիտությունն է, այլ բառակազմությունը («Լեզվական համակարգ՝ հայերենի հնչյունական, բառակազմական, քերականական համակարգեր»): Եվ, ըստ այդմ, 5-6 տարիների ուսումնառության ծրագրում բառագիտությունը (իմաստաբանություն, բառակազմություն, բառապաշար, դարձվածաբանություն, բառարանագրություն) ներկայացված է ցաքուցրիվ ու հատվածական:
- Ծրագիրը չի նախատեսում բայի սեռի ուսուցում. մինչդեռ նյութը չափազանց կարեւոր է՝ բայական համակարգը եւ բայի գործառական հնարավորությունները հասկանալու, շարահյուսական կառույցներում կողմնորոշվելու եւ ճիշտ ու արտահայտիչ, նպատակային խոսք կազմելու համար:
- Քիչ ժամաքանակ է հատկացված անկանոն եւ պակասավոր բայերի ուսուցմանը, ընդամենը՝ 6 ժամ: Մինչդեռ սա բայական համակարգի առանցքային թեմաներից է (նախորդ ծրագրից հանիրավի վտարված էր). դրա իմացությամբ նույնիսկ կարելի է չափել մարդու գրագիտությունը: Թեմայի մասին նախ պետք է ընդհանուր գիտելիք տրվի միջին դպրոցում, ապա թեման առավել մանրամասն պետք է ուսուցանվի ավագ դպրոցում:
- Պահպանված չէ թեմաների ուսուցման համամասնությունը, հաշվի չեն առնվել թեմայի կարեւորությունն ու բարդությունը, օրինակ՝ կապին եւ շաղկապին տրվում է ընդամենը 4-5-ական ժամ, մակբային՝ 8 ժամ, անկանոն եւ պակասավոր բայերին՝ 6 ժամ (7-րդ դ.), պատկերավորման եւ արտահայտչական միջոցներին՝ 4 ժամ (11-րդ դ.): Մինչդեռ անհարկի ուռճացված է որոշ թեմաներին տրվող ժամաքանակը. հատուկ եւ հասարակ, անձնանիշ եւ իրանիշ գոյականներ՝ 10 ժամ (7-րդ դ.), մեջբերվող ուղղակի խոսք՝ 28 ժամ (9-րդ դ.), ուղղագրություն՝ 18 ժամ (10-րդ դ.) եւ այլն:
- Ձախողված է ոճագիտության մատուցումը (ըստ նախագծի՝ «ՈՃԵՐ»): Ծրագրի այս հատվածը կազմված է առանձնահատուկ անիմացությամբ: Անընդունելի է գործառական ոճերը միմյանցից հեռացնելու ծրագրային «որոշումը»: Դրանք, տարբերություններով հանդերձ, ունեն զգալի ընդհանրություններ, հետեւաբար պետք է ուսուցանվեն հաջորդական միասնությամբ:

8. Այն ճշմարտությունը, որ մեզանում ավագ դպրոցը ժամավաճառության օջախ է (եւ որ օր առաջ պիտի հրաժարվել դրանից), հաստատվում է նաեւ այս նախագծով. երեք տարի շարունակ՝ 10-11-12-րդ դասարաններում, նույն կամ գրեթե նույն բովանդակությամբ եւ սաստիկ համառությամբ կրկնվում է հայոց լեզվի բովանդակային նյութը: Ըստ որում, շեշտադրվում են միայն որոշակի թեմաներ՝ ուղղագրություն, ուղղախոսություն, «ոճեր»՝ այն էլ խիստ պարզունակ պահանջներով՝ ճանաչել եւ տարբերակել գործառական ոճերը, ճանաչել բառերի ձեւաիմաստային տեսակները, դարձվածքները, իմանալ եւ տարբերակել խոսքի մասերը ըստ խոսքիմասային առանձնահատկությունների, խոսքի մասերը դասակարգել ըստ օրինաչափությունների եւ նման բաներ: Եվ այդ բոլորը՝ առանց համակարգության, առանց զարգացման միտումների:

9. Հատուկ պետք է ընդգծել եւ շեշտադրել գործնական աշխատանքների կարեւորությունը եւ դերը: Ծրագիրը «կենտրոնացել է» տեքստ ու փաստաթուղթ կազմելու եւ էսսե (գրական տեքստ) գրելու գործի վրա, բայց դա բնավ էլ ստեղծագործական միտքը մշակելու ուղիղ ճանապարհը չէ, մանավանդ երբ չեն բացատրվում շարադրանք կազմելու հնարներն ու ձեւերը: Սա նաեւ նյութը սերտողաբար յուրացնել տալու թաքնված ճանապարհ է, քանի որ, ըստ հեղինակային խմբի պարզաբանումների, որոշակի դասարաններում աշակերտը ուսուցչի օգնությամբ կկազմի «գրական տեքստեր» ընտրված հեղինակների երկերի վերաբերյալ: Իսկ ավարտական դասարանում գիտելիքի ստուգումը ենթադրում է արդեն մշակված եւ պատրաստի «գրական տեքստերի» անգիր շարադրանք:

10. Միջառարկայական կապերի մատուցումը՝ հաճախ ուղղակիորեն պատճենված արեւմտյան նմանատիպ փաստաթղթերից, ավելի շատ ձեւական բնույթ է կրում: Դա առավել հստակ երեւում է նաեւ վերջնարդյունքների, երբեմն գործնական առաջադրանքների ձեւակերպումներում: Հատկապես վերջիններում ակնհայտ են նաեւ մասնագիտական լուրջ թերացումներ եւ բացթողումներ:

11. Գիտելիքների ստուգման այն ձեւը, որը հրամցվում է 12-րդ դասարանում, սկզբունքորեն անընդունելի է. շարադրանքի միջոցով ստուգումը հանգեցնելու է կամայականությունների եւ սուբյեկտիվ գործելաոճի:

12. Այս փաստաթուղթը, մեղմ ասած, գրագետ շարադրանքի տիպար օրինակ չէ (9 ամիսը քիչ ժամանակ չէր փաստարկված եւ գրագետ շարադրանք ունենալու համար). նրանում առկա են բազմաթիվ սխալ ձեւակերպումներ, անճիշտ դատողություններ, սխալ բառագործածություններ, տերմինների շփոթ, վրիպակներ: Բավարարվենք մեկ-երկու օրինակով. «Չափորոշչային պահանջները ձեւավորվում են՝ հաշվի առնելով սովորողի անհատական առանձնահատկությունները….» (պահանջնե՞րն են ինչ-որ բան հաշվի առնում); «Տեխնիկայի եւ գիտության սրընթաց զարգացումը….»; «….ուսումնասիրվում է հայոց լեզվի քերականությունը ձեւաբանություն եւ շարահյուսություն բաժիններով՝ շեշտադրելով….» (քերականությո՞ւնն է ինչ-որ բան շեշտադրում); «….Հայոց լեզվի ուսումնառության համար սահմանվել են հետեւյալ հիմնական եւ ենթահասկացությունները»; «լեզվաքերականություն» եւ այլն, եւ այլն:

Ցավալի է, որ ԿԳՄՍ նախարարությունը հանրությանը ներկայանում է այսօրինակ փաստաթղթով»:

YSU.AM

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի:

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց Երկրին» պարտադիր է: Ⓡ նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1030, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 05.07.2020թ.: